դին, ամուսնացած Հեթում թագաւորի դըստեր Ռիթայի հետ։* Էջմիածնի No. 315 աւետարանի մէջ, անթուական, բոլորգիր եւ սքանչելի խորաններով, երկաթագրով․ գըրուած է, հաւանօրէն ստացող իշխանի անունը․ 139ա․ «Շնորհեա մեզ տր ընդ/երկայն աւուրս զԿոստանդին բարեպաշտ իշխ/ան թագադիր Հայոց Կի/լիկեցւոց նահանգիս/ եւ տր Սարուանդիք»։ Այսպիսի տուեալներով կարող ենք հաստատուն կերպով ասել, թէ Երուս․ի No. 1956 աւետարանի ձօնի մէջ «Կոստանդին մեծ իշխան» «թագադրաւղը» Սարուանդաքարի տէր Կոստանդինն էր։

Արդեօ՞ք Էջմ․-ի No. 315 աւետարանը նոյնպէս Հռոմկլայի դպրոցի գործ էր, չունինք որ եւ է յիշատակութիւն։ Բայց յիշել կարող ենք, որ այս աւետարանի կամարները կամ խորանները 5բ–6ա․, որ անաղարտ մեր ձեռքն են հասել, կախարդիչ գեղեցկութիւն ունին։



Պատկ․ 26

Տնօրինական պատկերներ կամ մեծ մանրանկարներ չունի աւետարանը բացի չորս ա-

*Ալիշան Սիսուան 209/10։